ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.11.2024թ. N 454/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.12.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Ն.Խանամիրյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Կարապետյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

-«Մայ Մարկետ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-1-ին և 2-րդ չափաբաժիններով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Ն.Խանամիրյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան